



DIocese OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 • 212-MU 6-0710

Գ Ի Ր Օ Ր Հ Ն Ո Ռ Թ Ե Ա Ն

ԲԷՅՍԻՆԻ ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՕԾՄԱՆ ԱՌԹԻԻ

Ձերմապէս կը շնորհաւորենք Բէյսիւնի Ս. Մեսրոպ եկեղեցւոյ համայնքի նախանձախնդիր եւ աշխատունակ մեր զաւակները, որոնք միասնական ջանքերով կարողացան կարճ ժամանակի ընթացքին ամբողջացնել շինութիւնը նոր եկեղեցիին: Կստան ենք որ խորունկ հաւատքի եւ բացառիկ նուիրումի արդիւնքն է այս սքանչելի իրագործումը, որուն համար հոգեկան մեծ զոհունակութիւն կը զգան արդարեւ բոլոր անոնք որոնք որեւէ կերպով սատար հանդիսացան ընդհանուր գործին:

Ութսուն տարի առաջ հայրենի զաւառներէն եկւոր խումբ մը ազգակիցներ կայք հաստատեցին Միշիկըն Լիճի փոլսները արագ թափով ամող Բէյսիւն քաղաքի խոնարհ մէկ անկիւնը: Իրենց ժիր մկանները լարելով անոնք լծուեցան իրենց նոր բնակավայրի զարգացման նպատակով աշխատանքներուն: Նաեւ սիրով հետամուտ եղան ստեղծելու տոհմային աւանդութիւններով օժուլ հայկական կեանք մը, որ շուտով պիտի ունենար ծխական մարմիններ, սեփական եկեղեցի, հայերէն լեզուի ուսուցման դասարաններ, գրադարան եւ մշակութային ու հասիակական կազմակերպութիւններ:

Աւելի քան կէս դարու շրջանին հաւաքական մաքառումներու իր պատմութիւնը կը վկայէ թէ Բէյսիւնի մեր պատուական ժողովուրդը միշտ արթուն է կանգնած պատնէշին վրայ: Աննահանջ հետապնդած է հոգին լուսաւորող նպատակներ: Հիանալի հետեւողութեամբ կանյք եւ երիտասարդներ կամեցած են իրենց թարմ ուժերը միախառնել այրերու աշխոյժ կողովին, որպէս զի շէն ու պայծառ մար հայք-Եկեղեցին, կանոնաւոր գործէր հայ Դպրոցը, կրօնական դաստիարակութիւն ստանային մանուկները, որակաւոր ըլլային հայ մշակոյթին նուիրուած յայտագիրները եւ յաջողակ ազգին կարիքներու բարձման համար բացուած արշաւները, եւ տակաւին կարելի ըլլար ակնկալուած աջակցութիւնը ընծայելու թեմի ընդհանուր յառաջդիմութեան զարկ տուող ձեռնարկութիւններուն:

Նորաշէն եկեղեցւոյ օծումը, Յունուար 20ի շաբաթավերջին, առաւել եւս պիտի ոգեւորէ ամէն հասակի բարեպաշտները: Եւ զոհաբանական իրենց աղօթքին ու երգին շունչով լեցուած անոնք աւիւն եւ կամեցողութիւն միախառնած, պիտի մզնին աւելի նպատաւոր պայմաններ ստեղծել եկեղեցական եւ ազգային առաջադրութեանց պողաւորման համար:



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 • 212-MU 6-0710

- 2 -

Կ'օրհնենք Ռէյսինի համայն հայութիւնը, եւ կը մաղթենք որ ամէնքը
տեւապէս թուրուած մնան շուրջը հոգեւոր հովիւին, ժխական Խորհուրդին,
տիկնանց եւ երիտասարդաց միութիւններուն, որպէս զի համայնքային կեանքը
միշտ մնայ զգրաւոր եւ Աստուծմէ պարգեւուած շնորհները արժանաւոր կերպով
մատուցուին հայց. Սկեղեցւոյ բարեգարդութեան եւ հայ մշակութային ժառան-
գութեանց պահպանման ու տարածման:

"Սկայք ժողովուրդք ի տաճարի փառաց Զրիստոսի, տուք ամենեքեան օրհ-
նութիւն ի բարձունս":

Սիրոյ որջույիւ
Թորգոս Արքեպիսկոպոս
ԹՈՐԳՈՍ ԱՐԷՅԳԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Հոկտեմբեր 24, 1972
Նիւ Եորք